ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/33

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.03.2018թ. թիվ 03/26-3/5934-18 գրությամբ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03012667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>**ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը>**</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1052 գրության հիման վրա, 30.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1052 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն ճանաչվել է 12-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ սահմանված կարգով ծանուցվել է մասնակցին:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումները թերի են կատարվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ Ոսկան Պոչինսկին:

3. **<u>«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.04.2018թ. ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) 12-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

12	ՌՈՍԴՕՏ	***ՏՊ 2451***-004-36732629-99 - համասեռ, թափանցիկ բաց դեղինից մինչև մուգ դեղին - կինեմատիկական մածուցիկությունը՝ 100ՕՇ ոչ պակաս 2,0 մմ2/վ, 50ՕՇ ոչ պակաս 5,0 մմ2/վ, - եռման ջերմաստիճանը՝ 260 ՕՇ-ից ոչ ցածր, - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ որ ավել 0.03%, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70 ՕՇ 0-10 % - ph 7.0-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 12-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել նաև «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրերի մաս կազմող ծանոթություն դաշտը, բացակայում է ռետինի ծավալի փոփոխության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև առկա են տարբերություններ առաջարկվող ապրանքի ՏՊ-ի (տեխնիկական պարամետրեր) մեջ:

Գնահատող հանձնաժողովը 12.03.2018թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը արձանագրել է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել առաջարկվող ապրանքի ՏՊ-ի մեջ եղած տարբերությունը, ուստի Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և 12-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

Հանձնաժողովը 17.03.2018թ. որոշել է հաստատել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պամանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

17.03.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի համաձայն 12-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.03.2018թ. թիվ ԴՎԱ/1052 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Մասնակցի ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սակայն մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ ծանուցվել է մասնակցին: Ընկերության կողմից շտկումները թերի են կատարվել, ինչի արդյունքում հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն

արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) 12-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

12	ՌՈՍԴՕՏ	***ՏՊ 2451***-004-36732629-99 - համասեռ, թափանցիկ բաց դեղինից մինչև մուգ դեղին - կինեմատիկական մածուցիկությունը՝ 100ՕC ոչ պակաս 2,0 մմ2/վ, 50ՕC ոչ պակաս 5,0 մմ2/վ, - եռման ջերմաստիճանը՝ 260 ՕC-ից ոչ ցածր, - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ որ ավել 0.03%, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70 ՕC 0-10 % - ph 7.0-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200լ-ոց տարաներով:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն, Ընթացակարգի թիվ 4 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարության համաձայն նշել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի 2 մասի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում

են՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 6.1 հավելվածը, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Սակայն Հանձնաժողովը արձանագրել է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել առաջարկվող ապրանքի անվանման և ՏՊ-ի մեջ եղած տարբերությունը, ուստի Հանձնաժողովը 12.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 17.03.2018թ. կայացված որոշմամբ որոշել է մերժել Ընկերության հայտը:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի և Ընկերության կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած և հրավերով սահմանված ՌՈՍԴՈՏ ապրանքների տեխնիկական բնութագրերը լիովին համապատասխանում են իրար: ՏՊ-ի մեջ նշված հիմնական տեխնիկական պարամետրը 2451 է, իսկ դրանից հետո շարունակվող մնացյալ բոլոր նիշերը ուղակի արտադրող ընկերության, տարածաշրջանի և այլ՝ ոչ էական, տեխնիկական բնութագրերի հետ առնչություն չունեցող տվյալներ են, ուստի տվյալ պարագայում գտնում ենք, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի ապրանքի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին:

Ցանկանում ենք նշել նաև, որ Ընկերությունը 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն ընդգրկվում է են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, իսկ այս պարագայում «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից չի խախտվել օրենքի վերոնշյալ հոդվածով սահմանված որևէ դրույթ, քանի որ Պատվիրատուի կողմից պահանջված բոլոր գործողությունները կատարվել է Ընկերության կողմից, և ներկայացվել են որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, և վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կատարվել են շտկումներ, սակայն այն չի

ընդունվել Հանձնաժողովի կողմից և որակվել է որպես թերի, իսկ այս պարագայում գտնում ենք, որ Ընկերության կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն:

Բացի այդ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ Պատվիրատուն պետք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, սակայն Ընկերության կողմից համապատասխան թերի շտկման արդյունքում ըստ Հանձնաժողովի առաջացած խախտումը արձանագրվել է 12.03.2018թ., իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը վերը նշված օրենքով նախատեսված հիմքերն ուղարկել է լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը միայն 28.03.2018թ.:»:

Ի լրումն «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն 15.05.2018թ. Խորհրդին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր) 12-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

12	ՌՈՍԴՕՏ	***ՏՊ 2451***-004-36732629-99 - համասեռ, թափանցիկ բաց դեղինից մինչև մուգ դեղին - կինեմատիկական մածուցիկությունը՝ 100ՕՇ ոչ պակաս 2,0 մմ2/վ, 50ՕՇ ոչ պակաս 5,0 մմ2/վ, - եռման ջերմաստիճանը՝ 260 ՕՇ-ից ոչ ցածր, - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ որ ավել 0.03%, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70 ՕՇ 0-10 % - ph 7.0-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, Պատվիրատուն Ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 12-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում է կատարել կոնկրետ առևտրային (ապրանքային) նշանին և ֆիրմային անվանմանը:

Այս պարագայում, գտնում ենք, որ Պատվիրատուն կոնկրետ հղումներ օգտագործելու դեպքում պետք է սահմաներ «կամ համարժեք» բառերը, որը բացակայում է 12-րդ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրում, ինչը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերում նման տեխնիկական բնութագրեր սահմանելով Պատվիրատուն մրցակցության հավասար պայմաններ չի ապահովել հնարավոր մասնակիցների համար, իսկ նման բնութագրերը հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Բացի այդ ցանկանում ենք նաև նշել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/34 ծածկագրով նոր գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 5-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
5	Արգելակի հեղուկ	Արտադրող գործարանի համարժեք ՏՊ, ԴՕՏ-4 դասի արգելակման հեղուկ Համասեռ, թափանցիկ հեղուկ՝ բաց դեղինից մինչև մուգ դեղին: - կինեմատիկական մածուցիկությունը՝ 1000C ոչ պակաս 2 մմ2/վ, 500C ոչ պակաս 5 մմ2/վ, -400C ոչ ավել 1500 մմ2/վ, - հեղուկի (չոր) եռման ջերմաստիճանը՝ 260 0C-ից ոչ ցածր, - հեղուկի (խոնավ) եռման ջերմաստիճանը՝ 165 0C-ից ոչ ցածր - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ ոչ ավել 0.03%, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 700C-ում՝ 0-10 %, - կայունությունը բարձր ջերմաստիճանում՝ ոչ ավել 30C, - հոսունությունը և արտաքին տեսքը ցածր ջերմաստիճանում (-500C-ի դեպքում՝ 6 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն, պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 35վրկ - դիմացկունությունը ջրի նկատմամբ (-400C-ի դեպքում՝ 22 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն,պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 10վրկ - ջրածնային ցուցիչը, ph 7.0-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200 լ-ոց տարաներով:

Վերը նշված ընթացակարգի 5-րդ չափաբաժնով նախատեսված Տեխնիկական բնութագրում ընդգրկված տեխնիկական պարամետրերը նույնությամբ համնկնում են յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին:

Սակայն, այս անգամ Պատվիրատուն որպես տեխնիկական պայման նշել է ԴՕՏ-4 դասի արգելակման հեղուկ, ինչը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ և 6.1-րդ հավելվածով ներկայացրել էր «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն: Այսինքն Պատվիրատուն Ընթացակարգը չկայացած հայտարարելուց հետո հայտարարել է նոր

գնման ընթացակարգ, որի արդյուքում ցանկանում է ձեռքբերել նույն ապրանքը, ինչի համար արդեն մերժել էր Ընկերությանը:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/33 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2018թ. թիվ 03/26-3/5934-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1052 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 և 12.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից 11.04.2018թ. և 15.05.2018թ. Խորհրդին ներկայացրած գրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ յուղերի և քսուքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում ներկայացնել որակավերումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 09.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 2.3 կետով արձանագրել է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Նույն արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է 12-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 12.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Ժակ և

Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված և տեխնիկական բնութագրի մաս կազմող ծանոթություն դաշտը, տեխնիկական բնութագիրը թերի է՝ բացակայում է ռետինի ծավալի փոփոխության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև առկա են տարբերություններ, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի անվանման և ՏՊ-ի մեջ առկա մասնագիտական եզրակացություն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 12.03.2018թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և մասնակիցներին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ հետևյալ բովանդակությամբ.

- 12-րդ չափաբաժին՝ անվանումը՝ «ДЗЕРЖИНСКИЙ ДОТ-4», ապրանքային նշանը՝ «ДЗЕРЖИНСКИЙ ДОТ-4», արտադրողի անվանումը՝ «ООО "СРЭКСТЭН», ծագման երկիրը՝ Ռուսաստանի Դաշնություն, տեխնիկական բնութագիրը՝ ՏՊ 2451-001-52370640-03 թափանցիկ, համասեռ, հեղուկ առանց նստվածքների և մեխանիկական խառնուրդների, գույնը՝ դեղին, կինեմատիկ մածուցիկությունը 100^{0}C-ի դեպքում ոչ պակաս 5,618մմ^{2}/վ, եռման ջերմաստիճանը՝ 266^{0}C-ից ոչ ցածր, մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ բացակայություն, ջրածնային ցուցիչը pH՝ 8,8, կայունությունը բարձր ջերմաստիճանի դեպքում՝ 2,3 ^{0}C-ից ոչ ավել, 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփխությունը 70 ^{0}C 0-10%: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 200լ-ոց տարաներով:

Ծանոթություն՝

1. ապրանքները կհանձնվեն արտադրող գործարանի որակի անձնագրի և համապատասխանության սերտիֆիկատի առկայությամբ,

2. ապրանքների արտադրման տարեթիվը՝ 2018թ.,

3.ապրանքները՝ չօգտագործված:

Հանձնաժողովը, արձանագրել է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի անվանման և ՏՊ-ի մեջ եղած տարբերությունը չի շտկվել և որոշել է մերժել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդի անդամին հայտնեց, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած և հրավերով սահմանված ՌՈՍԴՈՏ ապրանքների տեխնիկական բնութագրերը լիովին համապատասխանում են իրար և հավելեց, որ ՏՊ-ի մեջ նշված հիմնական տեխնիկական պարամետրը 2451 է, իսկ դրանից հետո շարունակվող մնացյալ բոլոր նիշերը ուղակի արտադրող ընկերության, տարածաշրջանի և այլ՝ ոչ էական, տեխնիկական բնութագրերի հետ առնչություն չունեցող տվյալներ են: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Պատվիրատուն Ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով 12-րդ չափաբաժնի մասով գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս, պահանջ և հղում է կատարել կոնկրետ ապրանքային նշանին և ֆիրմային անվանմանը և հավելեց, որ նման պարագայում Պատվիրատուն կոնկրետ հղումներ օգտագործելու դեպքում պետք է սահմաներ «կամ համարժեք» բառերը, որը սակայն բացակայում է 12-րդ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրում:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի անդամի այն հարցին, թե արդյո՞ք Հրավերով պահանջված Ռոսդոտ արգելակման հեղուկը կոնկրետ ապրանքանիշ, ֆիրմային անվանում է, և եթե այո, ապա արդյո՞ք Ընթացակարգի հրավերով սահմանվել է «կամ համարժեք» բառերը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ Ռոսդոտ արգելակման հեղուկը կոնկրետ ապրանքանիշ է և ֆիրմային անվանում և ընթացակարգի հրավերով չի սահմանվել համարժեք ապրանք ներկայացնելու համար «կամ համարժեք» բառերը, քանի որ Պատվիրատուին անհրաժեշտ էր ձեռք բերել հենց տվյալ ապրանքը, որովհետև ներկայումս մեքենաներում օգտագործվում են հենց այդ ապրանքատեսակը, իսկ այլ ապրանքատեսակ օգտագործելը տվյալ պարագայում անհնար է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

• 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

• 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 13-րդ հոդվածի՝ 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Խորհուրդն արձանագրում է, որ.

• Հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով՝ որպես ձեռքբերման ենթակա գնման առարկա նշվել է «ՌՈՍԴՕՏ» ապրանքը:

• «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվել է՝ «ДЗЕРЖИНСКИЙ ДОТ-4» ապրանքը:

• Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված «ДЗЕРЖИНСКИЙ ДОТ-4» ապրանքի տեխնիկական բնութագիրը բացի տեխնիկական պայմանից՝ «ՏՊ 2451-001-52370640-03», համապատասխանում է Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրի պահանջներին:

• Հրավերով գնման առարկայի տեխնիկական պայմանը՝ «ՏՊ 2451-004-36732629-99», հանդիսանում է կոնկրետ «ՌՈՍԴՕՏ» ապրանքի տեխնիկական պայմանը:

• Պատվիրատուն Ընթացակարգի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրի 12-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա

հատկանիշները սահմանելիս, պահանջ և հղում է կատարել կոնկրետ ապրանքային նշանին և ֆիրմային անվանմանը, առանց «կամ համարժեք» բառերի սահմանմամբ:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ գնման առարկայի բնութագրերը նկարագրելիս և դրա հատկանիշները սահմանելիս պահանջ և հղում կատարելով կոնկրետ ապրանքային և չսահմանելով «կամ համարժեք» բառերը, խախտել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից N 6.1 հավելվածով ներկայացված՝ ընթացակարգի 12-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և տեխնիկական բնութագիը համարժեք է Հրավերով սահմանված գնման ենթակա ապրանքի ամբողջական նկարագրին և տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.03.2018թ. «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ